ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով օդափոխիչների միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԷԼ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ. Ներսեսյանը, Վ.Հարությունյանը, Է.Արշակյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԷԼ-17/3» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Սմարթլայն» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110)**
2. **«ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» (Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14)**
3. **«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Զավարյան 57/19, բն.142)**
4. **«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ (ք. Երևան, Գ. Նժդեհի 21)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. **«Սմարթլայն» ՍՊԸ, «ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ», «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ, «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ,** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«Սմարթլայն» ՍՊԸ, «ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ», «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 **«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 10 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված օրինակելի ձևի:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/					
		Քանակ	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	«Սմարթլայն» ՍՊԸ	«ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ»*	«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ*	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ
1	Օդափոխիչներ	2	152000	125000	200000	138000	91666.67

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել **«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

2.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ** -ին,

2.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝**«Սմարթլայն» ՍՊԸ-ին:**

3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Ներսեսյան

_____ Վ.Հարությունյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 06.07.2017թ.

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԷԼ-17/3» ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգով օդափոխիչների միջոցների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նախագահ Գագիկ Արշակյանս, անդամներ՝ Լ. Ներսեսյանս, Վ.Հարությունյանս, Էմմա Արշակյանս և քարտուղար Ռ. Խաչատրյանս, հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի հետ կապված չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Ներսեսյան

_____ Վ.Հարությունյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան